

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հեղինե Ազատի Մելքոնյան

ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ

- ժ. 02.03. «Համեմատական և տիպաբանական լեզվաբանություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Վ.Բրյուսովի անվան ԵրՊԼՀ-ում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Յ. Ա. Հակոբջանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր
Մ. Լ. Խաչիկյան

բանասիրական գիտությունների
թեկնածու
Ա. Մ. Գալստյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Խ.Աբովյանի անվան պետական
մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2012թ. հունիսի 21-ին՝ ժամը 14-ին,
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՅ-ի՝ Լեզվաբանության
019 մասնագիտական խորհրդում: Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012թ. մայիսի 18-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Ե.Ս.Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հոլովական իմաստներն ընդհանրությամբ են. իրենց դրսևորումներն ունեն ցանկացած լեզվում: Հոլովի և հոլովական իմաստների այլընտրանքային դրսևորումների ուսումնասիրությունը եղել և մնում է ձևաբանական տիպաբանության առանցքային հարցադրումներից: Սույն աշխատանքը նման մի փորձ է, որում զուգադրության եզրեր են ընտրվել հոլովական համակարգ ունեցող հայերենը և դրանից զուրկ ֆրանսերենը¹: Այստեղ «տիպականացման ոլորտ»² են դարձել հոլովական իմաստները՝ իրենց երկլեզու դրսևորումներով:

1. Ատենախոսության նպատակն է լուսաբանել հոլովական իմաստների արտահայտման զուգահեռ միջոցները ժամանակակից հայերենում և ֆրանսերենում: Որպես զուգադրության ելակետ՝ աշխատանքում ընտրված է հայերենը՝ իր հոլովաձևերով և դրանց հատուկ հիմնական իմաստ- գործառույթներով: Համեմատվող կողմը հոլովաձևերից զուրկ ֆրանսերենն է: Աշխատանքը միտված է մշակելու մի համակարգ, որում արտացոլված լինի ժամանակակից հայերենի գոյականի հոլովաձևերի ֆրանսերեն համարժեքների ընդհանուր պատկերը (այլ խոսքի մասերի հոլովումը դուրս է ատենախոսության նպատակից): Ավագժը աշխատանքի տեսական նպատակն է, մինչդեռ գործնականում նպատակ է դրվել որոշ չափով հեշտացնել հայալեզու հանրության կողմից ֆրանսերենի յուրացման գործընթացը:

Նշված տեսական և գործնական նպատակներին հասնելու համար դրվել են հետևյալ խնդիրները՝

- վերլուծել հոլովների մասին մշակված հայտնի տեսությունները.
- ուսումնասիրել հայերենի և ֆրանսերենի ձևաբանությանն ու շարահյուսությանը նվիրված գիտական և նորմատիվ հրապարակումները.
- տալ հայերենի հոլովների ձևաիմաստային բնութագիրը.
- լուսաբանել հայերենի հոլովաձև-կապական կառույց հարաբերակցության ներկայիս պատկերը.
- հետազոտել հայերենի հոլովներին համարժեք ֆրանսերեն դրսևորումները՝ որպես նյութ ընտրելով գործառական տարբեր ոճերի տեքստեր.
- հատուկ մշակված աղյուսակների միջոցով ներկայացնել աշխատանքի տեսական արդյունքները:

2. Թեմայի արդիականությունը: Ատենախոսության արդիականությունը հետևյալում է՝

- Համեմատական լեզվաբանության ոլորտը կհամալրվի մի այնպիսի աշխատանքով, որում համեմատվող լեզուները քննության առնված կարգի նկատմամբ ունեն ոչ թե քանակական, այլ որակական տարբերություններ:
- Հիմնվելով աշխատանքում ներկայացված տեսական և գործնական նյութի վրա՝ հայերենի և ֆրանսերենի համեմատությամբ հետաքրքրվողները հնարավորություն կունենան 1)վերագնահատելու հոլովի քերականական կարգի մասին շրջանառվող մեկնաբանությունները, 2)ուսումնասիրելու հայերենի հոլովներից յուրաքանչյուրի ֆրանսերեն համարժեքների ձևավորման համակարգը՝ դասակարգված ըստ առանձին գործառույթների, 3)օգտվելու շարահյուսական գործառույթների երկլեզու օրինակների պաշարից:
- Հայերենի տեսությամբ հետաքրքրվողները աշխատանքում կգտնեն՝ 1)պատմական ակնարկ՝ նվիրված հայերենի հոլովներին տրված մեկնաբանություններին,

¹Հին ֆրանսերենին հատուկ երկհոլով համակարգը, ըստ Ա.Դոգայի, վերացել է մինչև 14-րդ դարը:

² Մասնագիտական գրականության մեջ այս եզրույթով անվանվում է տիպաբանական քննության առնված լեզվական միավորը:

2) ժամանակակից հայերենի հոլովական համակարգի ձևախմբաստային նկարագրի նորովի մեկնաբանություն, 3) ժամանակակից հայերենում հոլովների և կապական կառույցների դերերի հարաբերակցության պարզաբանում:

3. Աշխատանքի նորույթը: Հայ լեզվաբանության մեջ առաջին անգամ գիտական ուսումնասիրության դաշտ է բերվում մի լեզվում՝ հոլովածների, մյուսում՝ հոլովական իմաստների այլընտրանքային դրսևորումների զուգադրությունը: Ձուգադրական նորույթից զատ՝ աշխատանքը փորձում է նոր խոսք բերել նաև ժամանակակից հայերենի հոլովական համակարգի ձևախմբաստային բնութագրի և հոլովածն-կապական կառույց հարաբերակցության խնդիրների լուսաբանման ոլորտներում: Աշխատանքի նորույթը հիմնականում արտացոլված է հեղինակային աղյուսակներում: (Տե՛ս աղյուսակ 1, 2, 3, 4, 5, 8, 9, 10, 11, 12)

4. Ուսումնասիրության լեզվանյութն ընտրվել է հիմնականում հայ-ֆրանսերեն թարգմանական տպագիր գրականությունից տարբեր ոճերի տեքստերի ներգրավվածությամբ: Թարգմանական լեզվանյութով սահմանափակված չլինելու և հետազոտության արդյունքները բնագրային ֆրանսերենով վերստուգելու նպատակով ուսումնասիրությունը տարվել է նաև ֆրանս-հայերեն ուղղությամբ: Ելնելով որդեգրված սկզբունքից՝ հիմնական տեքստում նախապատվությունը տրվել է հայ-ֆրանսերեն օրինակներին: Վիճակագրական հաշվումների հիմքում ընկած են բոլոր օրինակները, որ դասակարգված ներկայացվել են «Հավելված» բաժնում: Հայերենի հոլովածների և կապական կառույցների հարաբերակցության հարցը լուսաբանելիս լեզվանյութը քաղվել է պարբերական մամուլից, և դա այն բանի հանդգամբ, որ լեզվի զարգացումներն առաջին հերթին արտահայտվում են այդ ենթաոճի տեքստերում:

5. Աշխատանքի մեթոդական հիմքը: Ատենախոսությունը մշակելիս և շարադրելիս կիրառվել են ինչպես նեղ լեզվաբանական, այնպես էլ ընդհանուր գիտական մեթոդներ և հնարներ: Աշխատանքը շարադրված է հիմնականում համաժամանակյա տեսանկյունից, բացառությամբ՝ հոլովածն-կապական կառույց խնդրի ուսումնասիրությանը նվիրված հատվածի: Կիրառվել են մասնավորապես համաժամանակյա նկարագրության, համաժամանակյա զուգադրության և անմիջական բաղադրիչների վերլուծության լեզվաբանական մեթոդները: Լայնորեն կիրառվել է նաև վիճակագրության միջգիտական մեթոդը: Ավելին՝ աշխատանքի արդյունքների մեջ նորույթի մասն ապահովվել է գերազանցապես այս մեթոդով:

6. Աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսությունը կարող է հետաքրքրություն ներկայացնել ինչպես նեղ մասնագետների և ուսանողների շրջանում, այնպես էլ ֆրանսերեն ուսումնասիրող հայալեզու հանրության համար: Լեզվաբաններն այստեղ կգտնեն ընդհանուր, համեմատական-տիպաբանական լեզվաբանությանը, թարգմանության տեսությանը վերաբերող տեսական և գործնական նյութերի մեկնաբանության նոր փորձեր: Հայերենագետին կարող են հետաքրքրել հայերենում հոլովածն-կապական կառույց հարաբերակցությունը լուսաբանելու և հոլովների ձևախմբաստային նկարագիրը տալու հեղինակային փորձերը: Բուն զուգադրության հատվածը՝ իր լեզվանյութի ոճական բազմազանությամբ, ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն: օրինակների, դրանց վերլուծությունների և ամփոփիչ աղյուսակների միջոցով ընթերցողն իր համար կճշտի հայերենի հոլովածները ֆրանսերեն համարժեքներով փոխակերպելու որոշակի ուղիներ: Ատենախոսությունն իր թե՛ տեսական և թե՛ գործնական նյութով կարող է կիրառելի լինել հայ-ֆրանսերեն տիպաբանությանը կամ հայերենի տիպաբանական նկարագրին նվիրված դասընթացների շրջանակներում:³

³ Աշխատանքի հայերենագիտական հատվածն, օրինակ, մենք կիրառում ենք ՎՊՄԻ-ի բանասիրական ֆակուլտետում դասավանդվող «Ժամանակակից հայերենի տիպաբանությունը» դասընթացի շրջանակներում:

7. Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Աշխատանքի հիմնական մասը 169 էջ է՝ բաղադրված «Բովանդակությունից», «Ներածությունից», 3 գլուխներից, «Եզրակացություններից», «Օգտագործված գրականության ցանկից» և «Համառոտագրություններից»: Դրանց կցված է «Հավելվածը»՝ 120 էջ ծավալով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Ներածություն» բաժնում տրված է հարցի պատմությունը: Խոսվում է աշխատանքի գիտակարգային և բաժնային սահմանների, ինչպես նաև աշխատանքում կիրառված սկզբունքների մասին:

ԳԼՈՒԽ ԱՈՍԱԶԻՆ. ՀՈՒՆԿԻ ՔԵՐԱՎԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԸՍԲՈՆՈՒՄԸ- Այս գլխի 3 ենթաբաժիններում արտացոլված են հոլովի կարգի ընդհանուր լեզվաբանական և հայերենագիտական մեկնաբանությունները: Խոսվում է հոլովի քերականական կարգի սահմանման, հիմնական հարցադրումների, հոլովների քանակի և դասակարգման լեզվաբանական փորձի մասին՝ հատուկ շեշտ դնելով հարցի հայերենագիտական կողմի կրա:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԺԱՍՆԱԿՎԿԻՑ ԳԱՅԵՐԵՆԻ ՀՈՒՆԿՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՑ ՎԵՐԼՈՒԾՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԺԵՔՆԵՐԸ- Այս գլուխը նվիրված է ժամանակակից հայերենի հոլովների ձևափոխման և նկարագրին և հոլովածև-կապական կառույց հարաբերակցության խնդրին: Վերջինիս նպատակը հայերենում համադրականության և վերլուծականության հարաբերակցության պարզաբանումն է և դրանց զարգացման միտումների բացահայտումը: Կապական կառույցների ուսումնասիրությունն այստեղ նպատակային է համարվել այնքանով, որ զուգարկվող լեզվում ֆրանսերենում, դրանք են (այս դեպքում՝ նախդրավոր կառույցները) հոլովական իմաստների հիմնական արտահայտիչները:

2.1. «Ժամանակակից հայերենի հոլովների ձևափոխման նկարագիրը» ենթաբաժնում առաջարկվել են տերմինաբանական փոփոխություններ՝ կապված մասնավորապես «հոլովման տիպի» հետ: Կատարվել են ժամանակակից հայերենի հոլովումների դասակարգումները, ինչպես նաև հոլովների ձևափոխման նկարագրին ամփոփելու փորձեր, որոնք մերկայացվում են հետևող աղյուսակներով:

Աղյուսակ 2

Ժամանակակից հայերենի հոլովումները			
Հոլովման տիպերը			
Կցական (արտաքին, վերջավոր) «ի», «ու», «ան», «վա», «ոջ», «ց», «-ո», «-ա», «յան», «վան», «անց», «վի»		Թեքական (ներքին, անվերջավոր) «ա», «ո», «ե», դերանվանական	
Գոյականի հոլովման տեսակները			
ըստ համակարգում ունեցած կարգափոխման	ըստ ընդհանրականության աստիճանի	ըստ համակարգման հատկանիշի	ըստ զուգածության հնարավորության
համակարգային «ի», «ու», «ան», «վա», «ոջ», «ց», «ա», «ո»	ընդհանրական «ի»	ձևային⁴ «ի/ու»	մեմածև «ց», «անց», «-ա»,
հակահամակարգային (այլաձև)	լրացուցիչ բաշխման	իմաստային «ոջ», «վա»	զուգածև «ան»/«ի»

⁴Ձևային, իմաստային, ձևափոխման և պատմական հոլովումների տարբերակման մասին տես Մ.Ասատրյան, ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, Երևան, 2004, էջ 80-85:

«-ո», «-ա», «յան», «վան», «անց», «-ե-», «վի»	«ու», «ան», «վա», «ոջ», «ց», «ա», «ո» «յան», «վան», «անց», «-ե-», «-ո», «-ա», «վի»	ձևաիմաստային	«ու»//«վա», «ու»//«ի», «ա»//«ի», «վան»//«ի», «վա»//«ի», «յան»//«ի», «-ո»//«ի», «ոջ»//«ի»//«-ո-», «վան»//«ու»//«ի», «ի»//«ու»//«վա», «ու»//«ի»
		«ո» (նաև պատմական), «յան» (նաև պատմական), «ց», «ուն/ան», «ու/ա» (-ություն ածանցի դեպքում)	
		պատմական	
		«Օ/ու», «ն/ան», «ու/ա», «-ո», «-ա», «-ե-», «վան», «անց», «վի»	
		խառը	
		«ի»	

Աղյուսակ 3

Ժամանակակից հայերենի հոլովների ձևաիմաստային նկարագիրը							
Հոլովը	Հոլովի իմաստային դաշտը				Հոլովի ձևվորումը		
	Ընդհանուր իմաստը	Միջուկային իմաստագործառույթները	Միջուկամերձ իմաստագործառույթները	Ծայրամասային իմաստագործառույթները	Հիմնական միջոցը	Լրացուցիչ բաշխման միջոց (ներ)ը	Հոդատությունը (որոշիչ հոդեր)
Ուղղական	բացարձակություն // լիածավալայնություն, անվանողականություն	1. ենթակա 2. ուղիղ խ. 3. որոշիչ 4. ստորոգելի 5. տեղի պ.	1. ժամանակի պ. 2. կոչական 3. չափի պ.	1. նպատակի պ. 2. փոխակերպված ենթակա	0	-	+
Տրական	հատկացականություն // հանգակետայնություն	1. հատկացուցիչ 2. հանգման և մատուցման անուղղ. խ.-ներ 3. ուղիղ խ. 4. որոշիչ	1. ժամանակի պ. 2. տեղի պ. 3. նպատակի պ.	1. ձևի պ. 2. վիճակի պ. 3. փոխակերպված ենթակա 4. վերածան անուղղ. խ. 5. ստորոգելի	-ի	-ու, -ան, -վա, -ոջ, -ց, -յան, -վան, -անց, -ա-, -ո-, -ո, -ա, -ե-, -վի	+ (սահմանափակումներով)
Բացառական	անջատում // մեկնակետայնություն	1. անջատման անուղղ. խ. 2. տեղի պ. 3. ժամանակի պ. 4. վերաբերության անուղղ. խ.	1. հանձնատույնյան անուղղ. խ. 2. մասնական ուղիղ խ. 3. նյութի և բաղկացության անուղղ. խ. 4. ներգործող անուղղ. խ. 5. սահմանափակման անուղղ. խ. 6. հիմունքի պ. 7. պատճառի պ.	1. որոշիչ 2. ստորոգելի	-ից	-ուց հոլովման դեպքում)	-

Գործիական	միջոց	1. միջոցի անուղղակի խ. 2. ձևի պ. 3. միասնության անուղղ. խ.	1. նյութի բաղկացության անուղղ. խ. 2. սահմանափակման անուղղ. խ. 3. ներգործող անուղղ. խ. 4. տեղի պ. 5. ժամանակի պ. 6. չափի պ. 7. պատճառի պ. 8. հիմունքի պ.	և	1. որոշիչ 2. վիճակի պ. 3. ստորոգելի 4. փոխարինության անուղղ. խ.	-ով	-բ (-ություն, -ում ածանցների և «արյուն» բառի դեպքում)	-
Ներգոյական	ներառում	տեղի պ.	1. ժամանակի պարագա 2. սահմանափակման անուղղ. խ.		1. վիճակի պ. 2. ստորոգելի 3. հիմունքի պ.	-ում	-	-

2.2. «Հոլովածև-կապական կառույց հարաբերակցությունը ժամանակակից հայերենում» ենթաբաժնում հետազոտության լեզվանյութ են դարձել 1980-ականների, 1990-ականների և 2000-ականների հայալեզու պարբերական մամուլի տեքստերը, որոնց հիման վրա փորձ է արվել բացահայտել կապական կառույցների քանական և իմաստային տեղաշարժերը: Հիմնվելով տեսական գրականության փաստերի և հետազոտված լեզվանյութի վրա՝ կատարվել է հոլովածևների և կապական կառույցների հարաբերակցությունը պարզաբանելու փորձ, որի հիմնական արդյունքներն արտահայտվել են ստեղծագծության 5-րդ աղյուսակում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՀՈԼՈՎԱԿԱՆ ԻՍՍՍՏՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ- Այս գլուխը նվիրված է հայերենի հոլովածևների ֆրանսերեն համարժեքների վերլուծությանը: Գլուխն ունի 6 ենթաբաժին, որոնցից 3.1.-ում խոսվում է ֆրանսերենի նախդիրների խոսքիմասային առանձնահատկությունների և դրանց դասակարգումների մասին, 3.2.-3.6.-ում հոլով առ հոլով ներկայացվում են հայերենի 5 հոլովների⁵ յուրաքանչյուրին համապատասխանող ֆրանսերեն համարժեքները՝ դասավորված ըստ հայերենի հոլովներին հատուկ հիմնական գործառնությունների:

3.2. «Հայերենի ուղղական հոլովին համարժեք ֆրանսերեն դրսևորումները» բաժնի գլուգադրության հիմնական արդյունքներն արտահայտվել են հետևող աղյուսակում:

Աղյուսակ 8

Գործառնություն	Արտահայտությունը հայերենում		Ֆրանսերեն համարժեքների արտահայտությունը	
	Ձևավորումը	Ուղեկցող պարտադիր պայմանները	Հիմնական միջոցը	Լրացուցիչ, պատահական արտահայտությունը
1. Ենթակա	զրո ձևույթ (+ հոդ)	1. համաձայնություն 2. երբեմն խիստ շարադասություն նախադաս դիրքով	1. շարադասություն (հիմնականում կայուն-նախադաս դիրք), 2. հոդեր (մասնակի բազառություններով)	1. de նախդրով կառույց, 2. հարցական նախադասություններում երբեմն կրկնադրություն

⁵ Ատեղծագծության հիմքում 5 հոլովի տեսությունն է:

⁶ Աշխատանքում ուսումնասիրվել է ֆրանսերեն համարժեքների միայն ձևային կողմը. նպատակ չի հետապնդվել համարժեքություն փնտրել նաև լեզուների շարահյուսական գործառնությունների միջև:

2. Որոշիչ	զրո ձևույթ	1.կառավարում 2.նախադաս դիրք	1.հողեր (որոշիչ, անորոշ) 2.աննախդիր կամ նախդրավոր (de) կիրառություններ	Ետադաս՝ de նախդրով որոշյալի ուղեկցություն
3.Ստորոգելի	զրո ձևույթ (+ հոդ)	վերացական հանգույց- բայերի առկայություն	1.վերացական հանգույց- բայեր (être), 2.հիմնականում «ենթակա+հանգույց+ստորոգելի» կայուն շարահատություն	1.devenir, rester, avoir, avoir l'air, sembler, paraître, nommer, passer pour, être élu, demeurer... հանգույցներով կառույցներ, 2.շրջուն շարահատություն՝ «հանգույց+ստորոգելի+ենթակա» կաղապարով
4.Կոչական	զրո ձևույթ	1.հարակցում 2.երկկողմ տրոհում	1. անհող արտահայտություն 2.հարակցում, 3.երկկողմ տրոհում	1.հողավոր//ստացական դերանվան ուղեկցությամբ արտահայտություն, 2.բարեկրթության նորմերով թելադրված ձևավորվածություն 3.ծ ձայնարկության ուղեկցությամբ
5. Ուղիղ խնդիր (72 օրինակ)	զրո ձևույթ (+ հոդ)	1.ուժեղ կառավարում 2.ներգործական սեռի բայի առկայություն (մասնակի բացառությամբ)	1.կայուն շարահատություն՝ 2. «ենթակա+ստորոգյալ+ուղիղ խնդիր» շարահատություն 3. աննախդիր արտահայտություն որոշիչ//անորոշ//մասնական հոդերով ձևավորվածություն (88.8%)	1.որոշ բայերի պահանջով՝ նախդրավոր (à, de, sur) կիրառություն (11.1%) 2.շրջուն շարահատություն (հարցական//բացականչական հնչեղանգով, կրկնակի ուղիղ խնդրով նախադասություններում)
6.Ժամանակի պարագա (34 օրինակ)	0 ձևույթ + հոդ	1.կառավարում 2.ժամանականիշ գոյականների կիրառություն	1.ժամանականիշ գոյականների կիրառություն 2. աննախդիր , հողավոր//անհող գոյականներով կառույցներ (76,5%)	նախդրավոր կիրառություններ (dans, pendant, à, en) (23,5%)
7.Տեղի պարագա	զրո ձևույթ (+ հոդ)	1.կառավարում 2.տեղանիշ գոյականների կիրառություն	dans (49%) նախդրով կառույցներ	à (17%), en (11%), sur, pour, vers, jusqu'à նախդիրներով պատահական կառույցներ
8.Չափի պարագա	զրո ձևույթ (+ հոդ). հիմնականում բաղադրյալ կազմություն «թվական+գոյական» կաղապարով	1.կառավարում 2.ըրբեբանգների առկայություն	հիմնականում բաղադրյալ կազմություն՝ «թվական+գոյական» կաղապարով	գոյականի հոգնակի թիվ՝ համապատասխան հոդով

Օրինակների մեկական նմուշ՝ յուրաքանչյուր գործառույթի համար՝

1. Ենթակա- Կինը չէր համաձայնում:- ՅԹ, «Գիշորը», էջ 364

Sa femme n'en voulait rien savoir. (107)

2. Որոշիչ- մարդու տղան ոսկի ձեռք ունի:- ՊՍ, «Խաղալիք սարքողը», էջ 55

⁷ Հաշվի առնելով սեղմագրին ներկայացված ծավալային պահանջները՝ այստեղ օրինակները բերվում են նմուշի ձևով, այլ ոչ թե ըստ տարբեր կանոնների:

.... le fils de l'homme a des mains d'or. (266)

3. Ստորագելի- Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:-

ՀՀԱ, 12, էջ 6

La langue officielle de la République d'Arménie est l'arménien.

4. Կոչական- Մա՞հն է արդյոք, թե նի՞նջը քեզ / Պատել, պայծա՞ր Նաիրի:-

ՎՏ, «Մի՞ թե վերջին պոետն եմ ես», էջ 289

Est-ce la mort ou le sommeil / Qui t'a étreint, clair Nairi ? (231)

5. Ուղիղ խնդիր- 6.14. Քեզ համար խի՞ժաբեր փայտից մի տապալան շինիր:- Աստվծ

6. 14. Fais-toi une arche de bois de gopher.- Bible, Genèse

6. Ժամանակի պարագա- Եվ այսպես- կոփվում է ապագան յուրաքանչյուր վայրկյան կյանքում:- ԵՉ, «Ռուբայաթ», XLIV, էջ 320

Ainsi se forge l'avenir à chaque instant, dans la vie. (256)

7. Տեղի պարագա- Գնա՛ մենավոր վայրերը թափուր.... - ՄԻ, «Աբու-Լալա Մահարի», էջ 137

Va vers les lieux solitaires, libre.... (18)

8. Զափի պարագա- իսկ ծնակուտից երևան հասնելու համար պետք է գնալ մի գերեկ ու մի գիշեր:- ՀրՄ, «Աշնան արև», էջ 483

.... mais de Tsemakout à Erevan il faut bien compter un jour et une nuit. (271)

3.3. «Հայերենի տրական հոլովին համարժեք ֆրանսերեն դրսևորումները» բաժնի գրագաղութային հիմնական արդյունքներն արտահայտվել են հետևող աղյուսակում:

Աղյուսակ 9

Գործառույթը	Արտահայտությունը հայերենում		Ֆրանսերեն համարժեքների արտահայտությունը	
	Չևավորումը	Ուղեկցող պարտադիր պայմանները	Հիմնական միջոցը	Լրացուցիչ, պատահական արտահայտությունը
1. Հատկացուցիչ (37 օրինակ)	բացառապես տրականաձև (+ստացական, դիմորոշ, ցուցական հոդ)	կառավարում	բացառապես վերլուծական արտահայտություն de նախդրով (81,1%) (+հոդ/լրացում ստացական դերանվանք// ածականով)	1.à նախդրով կառույցներ (5,4%) 2. ածականական (8,1%) և աննախդիր արտահայտություններ (5,4%)
2. Որոշիչ (14 օրինակ)	-հոդ	կառավարում	բացառապես վերլուծական արտահայտություն de նախդրով (+հոդ) (86%)	pour նախդրով (14%) կառույցներ
3. Հանգման անուղղակի խնդիր (117 օրինակ)	բացառապես տրականաձև (+հոդ)	1. կառավարում 2. անանցողական բայեր	1.à (33,3%) և sur (23,1%) նախդիրներով կառույցներ 2.բայի ուժեղ կառավարմամբ աննախդիր կիրառություններ (20,5%)	de (8,5%), vers (5,1%), contre (4,3%), autour de (0,9%), avec (2,6%), pour (0,9%), sous (0,9%) նախդիրներով կառույցներ
4. Մատուցման անուղղակի խնդիր (35 օրինակ)	բացառապես տրականաձև +հոդ	1. կառավարում 2. անանցողական բայեր՝ մատուցման, նվիրման կամ հաղորդման իմաստով	à նախդրով կառույցներ (80%)	1. dans , vers , jusqu'à , entre նախդիրներով կառույցներ (ընդամուր 14,3%) 2. աննախդիր կիրառություններ (8,6%)

5.Տեղի պարագա (44 օրինակ)	+հոդ	1. կառավարում 2. տեղանիշ գոյականներ	sur նախդրով (63,6%) կառույցներ	1.à (22,7%) և dans (9,1%) նախդիրներով կառույցներ 2. աննախդիր կիրառություններ (4,5%)
6.Ժամանակի պարագա (31 օրինակ)	(+հոդ)	1. կառավարում 2. ժամանակահատված գոյականներ 3. լրացական բառերով ուղեկցված լինելու հնարավորություն	1.à (51,6%), en (22,6%) նախդիրներով կառույցներ 2.բայի ուժեղ կառավարմամբ աննախդիր կիրառություններ (6,5%)	dans (9,7%), par (6,5%), pendant (3,2%) նախդիրներով կառույցներ
7.Նպատակի պարագա (2 օրինակ)	(+հոդ)	1. կառավարում 2. տեղաշարժման կամ հրավիրման իմաստով բայեր 3. տեղի պարագայի առկայություն	-	en նախդրով և նկարագրական տիպի պատահական արտահայտություններ
8.Ուղիղ խնդիր (32 օրինակ)	(+հոդ)	1. ուժեղ կառավարում 2. անցողական բայեր	1. աննախդիր արտահայտություն (56,3%) 2. sur (21,9%) և à (15,6%) նախդրով կառույցներ	de նախդրով կառույցներ (6,3%)
9.Վիճակի պարագա (14 օրինակ)	+հոդ	1. թույլ կառավարում 2. բառակապակցային արտահայտություն 3. կազմաբանությունների մասնակցություն	Sur (42,9%) և à (35,7%) նախդիրներով կառույցներ	Dans (14,3%) և en (7,1%) նախդիրներով կառույցներ

Օրինակների մեկական մտուշ յուրաքանչյուր գործառույթի համար՝

1. **Հատկացուցիչ-** *Բոլիս մեջ կքանեն ծովի ջուրը աղի....- Ո՛ր, «Տվե՞ք ինձ...», էջ 277*
Dans mon poing je filterai l'eau de la mer.... (404)
2. **Որոշիչ-** *....երգում են փերիները կառոտի և անուրջի երգերից....- Ար, «Հինգրգո-խանը», էջ 401*
....chantent les fées des chants de rêverie et de désir.... (63)
3. **Հանգման անուղղակի խնդիր-** *Ես թիկնել եմ ահա քարին....- ՊՍ, «Ծակատամարտ պատի հետ», էջ 20*
Je m'adosse à la pierre.... (26)
4. **Մատուցման անուղղակի խնդիր-** *4.3. Կայենը երկրի բերքից ընծա բերեց Աստծուն....- Աստվծ*
4.3. Caïn fit à l'Éternel une offrande des fruits de la terre....- Bible, Genèse
5. **Տեղի պարագա-** *Այս իմ կտակը թող գրվի շիրմիս....- Ար, «Արու-Լալա Մահարի», էջ 141*
Que l'on inscrive ce vers sur ma tombe.... (25)
6. **Ժամանակի պարագա-** *Լուսնյակ գիշերներին....- Ար, «Լառ-Սարգարը», էջ 129*
Par les nuits de clair de lune... (158)
7. **Նպատակի պարագա-** *Սիմոնին ուղարկել էին Ղազախ գործենի:- ՅրՍ, «Աշման արև», էջ 493*
Ils avaient envoyé Simon chercher du bois à Kazakh. (283)
8. **Ուղիղ խնդիր-** *Դեղին սովորեցնում էր Գիբորին, թե ինչ պետք է անի....- ՅԹ, «Գիբորը», 368*
Cette grand-mère apprenait à Guikor ce qu'il devait faire.... (111)
9. **Վիճակի պարագա-** *Բայց երբ Անդրոն շղթան ձեռքին գոմից դուրս եկավ....- ՅրՍ, «Օգոստոս», էջ 30*
Mais quand, sa chaîne en main, Andro sort de l'étable.... (35)

3.4. «Հայերենի բացառական հոլովին համարժեք ֆրանսերեն դրսևորումները» բաժնի զուգադրության հիմնական արդյունքներն արտահայտվել են հետևող աղյուսակում:

Գործառույթը	Արտահայտությունը հայերենում		Ֆրանսերեն համարժեքների արտահայտությունը	
	Չևավորումը	Ուղեկցող պարտադիր պայմանները	Հիմնական միջոցը	Լրացուցիչ, պատահական արտահայտությունը
1.Անջատման անուղղակի խնդիր (57 օրինակ)	-հոդ	1.կառավարում 2.անջատման, խուսափման իմաստով բայերի//բայանունների առկայություն	de նախորդվ կառույցներ (53%)	1.աննախդիր կիրառություններ (17,5%) 2. à (11%), par (3,5%), contre (3,5%), d'avec (7%), dans (5,3%) նախդիրներով կառույցներ
2.Վերաբերության անուղղակի խնդիր	-հոդ	1.կառավարում 2.ասացական, մտածական իմաստով բայերի առկայություն	de և sur (մեր օրինակներում չկան) նախդիրներով կառույցներ	հազվադեպ աննախդիր կիրառություններ
3.Մասնական ուղիղ խնդիր	-հոդ	1.կառավարում 2.ներգործական սեռի բայերի առկայություն	մասնական հոդով կառույցներ	de նախորդվ կառույցներ
4.Սահմանափակման անուղղակի խնդիր	-հոդ	1.կառավարում 2.որոշակի բայերի//ածականների առկայություն	de, en նախդիրներով կառույցներ	-
5.Համեմատության անուղղակի խնդիր	-հոդ	1.կառավարում 2.ածականի առկայություն	«de+ (դերանուն, հիմնականում tous) որոշիչ հոդ+գոյական» կաղապարով կիրառություններ	նկարագրական եղանակով que շաղկապի մասնակցությամբ
6.Նյութի և բաղկացության անուղղակի խնդիր (107 օրինակ)	-հոդ	1.կառավարում 2.ստեղծելու իմաստով բայերի առկայություն	անձնանիշ և իրանիշ գոյականների դեպքում de նախորդվ կառույցներ (78,3%)	միայն իրանիշ գոյականների դեպքում en և avec նախորդվ կառույցներ (ընդհանուր՝ 21,7%)
7.Ներգործող անուղղակի խնդիր	-հոդ	1.ուժեղ կառավարում 2.կրավորական սեռի բայի առկայություն	de և par նախդիրներով կառույցներ	-
8.Տեղի պարագա (26 օրինակ)	-հոդ	1.կառավարում 2.հեռացման իմաստով բայերի//բայանունների առկայություն 3.տեղանիշ գոյականների կիրառություն	de (69,2%) և par (15,4%) նախդիրներով կառույցներ	1. dans և à նախդիրներով կառույցներ (ընդհանուր՝ 7,7%) 2. աննախդիր կիրառություններ (7,7%)

9.Ժամանակի պարագա	1. -հող 2.բառակապակցային արտահայտություն բացառականով կողմի գերադասությամբ	1.կառավարում 2.մեկնակետի իմաստով ժամանականիշ գոյականների առկայություն	depuis, dès նախդիրներով կառույցներ	dans, avant նախդիրներով կառույցներ
10.Չիմունքի պարագա	-հող	1.կառավարում 2.կռահելու, եզրակացնելու իմաստով բայերի առկայություն	-	sur, de, par, dans, à de նախդիրներով կառույցներ
11.Պատճառի պարագա (38 օրինակ)	մենաբառ բացառական	1.կառավարում 2.գործողության կատարման պատճառ մատնանշող գոյականների կիրառություն	de (34,2%), par (31,6%) և à (21%), նախդիրներով կառույցներ	sur, à cause de*, sous, sous l'effet de նախդիրներով և «en+N+de cause» կաղապարով ծավալված կառույցներ (ընդհանուր 13,2%)
12.Որոշիչ (6 օրինակ)	-հող	1.կառավարում 2.առարկայի որակը մատնանշող գոյականների կիրառություն	de նախդրով կառույցներ (66,7%)	en նախդրով կառույցներ (33,3%)
13.Ստորոգելի	-հող	1.հանգույց բայի առկայություն 2.առարկայի որակ, առարկայի կամ անձի ծագում մատնանշող գոյականների կիրառություն	de նախդրով կառույցներ	-

Օրինակների մեկական նմուշ յուրաքանչյուր գործառույթի համար՝

- 1.Անջատման անուղղակի խնդիր- *Անջատում են ինձ աշխարհից ծանոթ....- ՊՍ, «Առավոտ լուստ», էջ 9*
...je m'abstrais moi-même / *Du monde* familier.... (18)
- 2.Վերաբերության անուղղակի խնդիր- *Ակնարկելով բանքատուն են/ Լիրը, անամոթ թամարից...- ՉԹ, «Ախթամար», էջ 101*
Médisent de l'impudique, / *De la honteuse Tamar.* (34)
- 3.Մասնական ուղիղ խնդիր- *....երգում են փերիները կարոտի և անուրջի երգերից....- ԱԻ, «Չինգիզ-խանը», էջ 401*
....chantent les fées des chants de rêverie et de désir....(63)
- 4.Սահմանափակման անուղղակի խնդիր- *Թվաբանությունից որդին էլ թույլ էր:-*
ՉԻՍ, «Աշման արև», էջ 484
Le frère aîné était bien faible en maths. (272)
- 5.Հանձնատության անուղղակի խնդիր- *....հագից անհրաժեշտ ոչինչ չգտա:- ԱԻ, «Ամենափիտանի բանը», էջ 467*
....plus nécessaire que le pain je n'ai point trouvé! (85)
- 6.Նյութի և բաղկացության անուղղակի խնդիր- *.... գնա, Աղունիկ,գոմից տուն սարքիր, Արմենակից Արմենակ սարքիր...- ՉԻՍ, «Աշման արև», էջ 486*
Toi, Aghoune, ma fille,.... de ton étable tu fais une maison, et d'Armenak tu fais Armenak... (275)

⁸ Այս և մյուս աղյուսակներում աստղանիշով առանձնացվել են արտահայտության այն միջոցները, որոնց համար օրինակներ չեն գտնվել:

7.Ներգործող անուղղակի խնդիր- բորիկ, արևից խամձված ուրբերով....- ԱՐ, «Լառ-Սարգարդ», էջ 127

.... ses pieds nus brûlés par le soleil.... (157)

8.Տեղի պարագա- Քաղաքներից ու գյուղերից, ստեպներից հեռու ու մոտ/ Եկել էին նրանք նորից՝ հուսավառված ու կրակոտ:- Ե2, «Անբոխները խելագարված», III, էջ 112
Parties des villes, des villages, des steppes proches et lointaines / A nouveau revenues, brûlant d'espoir et de ferveur. (258)

9.Ժամանակի պարագա- Ինչքան ժամանակ էր անցել այն օրից:- ԱՐ, «Ալպիական մանուշակ», էջ 139

Que de temps s'était écoulé depuis ce jour. (144)

10.Հիմունքի պարագա- C'est à de telles faiblesses que Rieux pouvait juger de sa fatigue.- A.Camus, "La peste"-242

Նման քուլագումներից Ռիեն կարող էր դատել իր հոգնածության մասին։ (120)

11.Պատճառի պարագա- Երրորդ ծիպվորը.... հնագետի կանչից վեր թռավ:- ԱՐ, «Ալպիական մանուշակ», էջ 137

Le troisième cavalier.... bondit à l'appel de l'archéologue. (141)

12.Որոշիչ- "J'ai vu une belle maison en briques roses...."- AdSE, "Le petit prince"-4
Ես տեսա վարդագույն աղյուսից մի տուն.... (12)

13.Ստորոգելի- De quelle planète es-tu ?- AdSE, "Le petit prince"-3

Ո՞ր մոլորակից ես:*

3.5. «Հայերենի գործիական հոլովին համարժեք ֆրանսերեն դրսևորումները» բաժնի զուգադրության հիմնական արդյունքներն արտահայտվել են հետևող աղյուսակում:

Աղյուսակ 11

Գործառույթը	Արտահայտությունը հայերենում		Ֆրանսերեն համարժեքների արտահայտությունը	
	Չևավորումը	Ուղեկցող պարտադիր պայմանները	Հիմնական միջոցը	Լրացուցիչ, պատահական արտահայտությունը
1.Միջոցի անուղղակի խնդիր (135 օրինակ)	-հող	1.կառավարում 2.միջնորդավորված գործողության գաղափար արտահայտող բայեր	de (23,7%), avec (23%), à (17%) par (16,3%) նախդիրներով կառույցներ	1. dans (7,4%), en (3,7%), sur (4,4%), à travers, à l'aide (ընդհ.՝ 2,2%) նախդիրներով կառույցներ, 2.աննախդիր կիրառություններ (4,4%)
2.Միասնության անուղղակի խնդիր	-հող	1.կառավարում 2.քանձրացական (անձ/իր) գույական-խնդրի առկայություն	avec նախդրով կառույցներ	-
3.Նյութի և բաղկացության անուղղակի խնդիր	-հող	1.կառավարում 2.ստեղծման իմաստով բայերի առկայություն 3.արդյունք-առարկայի առկայություն	de, avec նախդիրներով կառույցներ	-
4.Սահմանափակման անուղղակի խնդիր	-հող	1.կառավարում 2.գնահատման իմաստով մի խումբ բայերի կամ ածականների գե-	par, en նախդիրներով կառույցներ	-

		րադաս առկայություն		
5.Ներգործող անուղղակի խնդիր	-հոդ	1.ուժեղ կառավարում 2.կրավորական սեռի բայի առկայություն	par, de նախդիրներով կառույցներ	-
6.Տեղի պարագա (12 օրինակ)	-հոդ	1.կառավարում 2.տեղանիշ գոյականի կիրառություն	par նախդրով կառույցներ (մոտ 42%)	1.à travers, dans, sur (ընդհանուր՝ մոտ 42%) նախդիրներով կառույցներ 2. au travers de*, via*, au long de*, le long de* նախդիրներով կառույցներ 3. աննախդիր կիրառություններ (17%)
7.ժամանակի պարագա (7 օրինակ)	-հոդ	1.կառավարում 2.ժամանականիշ գոյականի կիրառություն	1. dans (28,6%) և en (28,6%) նախդիրներով կառույցներ 2. աննախդիր կիրառություններ (28,6%)	մակբայական համարժեք (14,3%)
8.Ձևի պարագա (61 օրինակ)	-հոդ	1.կառավարում 2.վերացական գոյականի կիրառություն	1. avec (24,6%), de (21,3%), à (13,1%) նախդիրներով կառույցներ 2. մակբայական համարժեքներ (9,8%)	1. en (6,6%), par (3,3%), dans (6,6%), նախդիրներով կառույցներ, 2. sur, à force de նախդիրներով պատահական կառույցներ (ընդհ. 3,3%) 2. աննախդիր (3,3%) և դերբայական (8,2%) համարժեքներ
9.Չափի պարագա (13 օրինակ)	1.հոգնակի գործիական (-հոդ) 2.բառակապակցային արտահայտություն «քվական//քան.դերանուն+գոյականի գործիական հոլով» կաղապարով՝ գործիականով կողմի գերադասությամբ	1.կառավարում 2.ճրգիմաստների առկայություն	pour (38,5%) և de (23%) նախդիրներով կառույցներ	pendant (15,4%), au long des (15,4%), au fond des (7,7%) նախդիրներով կառույցներ
10.Չիմունքի պարագա (27 օրինակ)	-հոդ	1.կառավարում 2.կռահելու, հաստատելու, հիմնվելու իմաստով բայերի առկայություն	par (29,6%), à (25,9%), sur (22,2%) նախդիրներով կառույցներ	pour, sous, selon, de, selon, en vertu de, dans նախդիրներով կառույցներ

				(ընդհ.՝ 22,2%)
11.Պատճառի պարագա	-հոդ	1.կառավարում 2.վերացական գոյակների կիրառություն	par և de նախդիրներով կառույցներ	-
12.Վիճակի պարագա (13 օրինակ)	1. -հոդ 2.բառակապակցա յին արտահայտություն գործիականով կողմի գերադասությամբ	1.կառավարում 2.հագուկապ կամ արտաքին տեսք կամ բեռնավորվածություն անվանող գոյականների կիրառություն	dans (38,5%), en (23%), avec (15,4%) նախդիրներով կառույցներ	1.à նախդիրով կառույցներ (7,7%) 2. աննախդիր կիրառություններ «որոշիչ հոդ+գոյական+participe passé» կաղապարով (15,4%)
13.Որոշիչ (27 օրինակ)	1. -հոդ 2.բառակապակցային արտահայտություն գործիականով կողմի գերադասությամբ	կառավարում	à (50%), en (23%), avec (11,5%) նախդիրներով կառույցներ	1. sur և dans (ընդհ.՝ 7,7%) նախդիրներով կառույցներ 2. անցյալ դերբայով և երկրորդական նախադասությամբ համարժեքներ (ընդհ.՝ 7,7%)
14.Ստորոգելի	-հոդ	վերացական հանգույց բայի առկայություն	avec, de նախդիրներով կառույցներ	-
15.Փոխարինության անուղղակի խնդիր	-հոդ	1.կառավարում 2.փոխարինության իմաստով բայերի առկայություն	par նախդիրով կառույցներ	-

